

«Վայոց Ձորի մարզի Գլաձորի համայնքում 2013 թվականի մայիսի 20-ից հունիսի 10-ը իրականացված վարչական հսկողության վերաբերյալ

«Վիճակագրության, տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 190-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրի և «Վայոց Ձորի մարզպետի 2013 թվականի մայիսի 20-ի թիվ 34-Ա որոշմամբ Գլաձորի համայնքում իրականացված վարչական հսկողության աշխատանքների մասնակցել են մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ն.Սիմոնյանը, ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության գլխավոր մասնագետ Վ.Հովհաննիսյանը, իրավաբանական բաժնի պետ Ն.Մաղաքյանը, Հողօգտագործման և հողաշինության տեսչության բաժնի գլխավոր մասնագետ Ս.Խլիսայանը, քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ Ս.Աղաջանյանը, Գլաձորի համայնքի ղեկավար Ա.Մարտիրոսյանը, Գլաձորի համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար Ա.Օրդոյանը :

Գլաձորի համայնքի ավագանին 2012 թվականի ընթացքում գումարել է 7 նիստ, ընդունել է 25 որոշում : 2013 թվականի հունվար-հունիս ամիսների ընթացքում ավագանին գումարել է՝ 4 նիստ, ընդունել է 19 որոշում :

Ավագանու որոշումները ընդունվել են « Իրավական ակտերի մասին » ՀՀ օրենքի 5-րդ գլխում նկարագրված օրենսդրական տեխնիկայի կանոններին համապատասխան / *Համաձայն՝ մեթոդական ուղեցույցի «Վարչական հսկողություն» բաժնի 2-րդ մասի, 7-րդ կետի 1-ին ենթակետի՝ «Համայնքի ղեկավարի այլ բնագավառներում իրականացրած լիազորությունների նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողություն» և «Կադրային գործի վարում» բաժնի 3-րդ կետի / :*

Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի «Հասարակայնության իրավական ակտերի մասին իրազեկման և իրավական ակտերի հաշվառման կարգերը հաստատելու մասին» թիվ 1146-Ն որոշման 2-րդ կետի պահանջները աշխատակազմում պահպանվում են /*Համաձայն՝ մեթոդական ուղեցույց՝ «Կադրային գործի վարում» բաժնի 2-րդ կետի / :*

Գլաձորի համայնքի ղեկավարը իր աշխատակազմի ու բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային

դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացրել է ավագանու հաստատմանը / *Համաձայն ' մեթոդական ուղեցույցի <<Վարչական հսկողություն>> բաժնի 2-րդ մասի, 7-րդ կետի 6-րդ ենթակետի' <<Համայնքի ղեկավարի այլ բնագավառներում իրականացրած լիազորությունների նկարագրի իրավական և մասնագիտական հսկողություն>> :*

Սահմանել է շենքերի ու շինությունների համարակալումը , ընդունել է որոշումներ, կազմել է արձանագրություններ , արձակել է կարգադրություններ /*Համաձայն ' մեթոդական ուղեցույցի <<Վարչական հսկողություն>> բաժնի 2-րդ մասի , 2-րդ կետի 8-րդ ենթակետի ' <<Համայնքի ղեկավարի քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում*

իրականացրած լիազորությունների նկարագրի իրավական և մասնագիտական հսկողություն>> և <<Վարչական հսկողություն>> բաժնի 2-րդ մասի , 7-րդ կետի 16-րդ ենթակետի' <<Համայնքի ղեկավարի այլ բնագավառներում իրականացրած լիազորությունների նկարագրի իրավական և մասնագիտական հսկողություն>> /:

Ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ կազմակերպում և ղեկավարում է պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացումը : Ձեռնարկել է համապատասխան միջոցներ քաղաքացիական պաշտպանության , հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների , ինչպես նաև տեխնոլոգիական ու տարերային աղետների վտանգների նվազեցման հետ կապված աշխատանքների կազմակերպման ուղղությամբ /*Համաձայն մեթոդական ուղեցույցի <<Վարչական հսկողություն>> բաժնի 2-րդ մասի , 7-րդ կետի 21-րդ ենթակետի' <<Համայնքի ղեկավարի այլ բնագավառներում իրականացրած լիազորությունների նկարագրի իրավական և մասնագիտական հսկողություն>> /:*

Ղեկավարվելով ՀՀ ՏԻՄ օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով համայնքի ղեկավարը աշխատանքներ է տարել պարտադիր , պատվիրակված և կամավոր լիազորությունների կատարման ուղղությամբ:

Միջոցներ է ձեռնարկում համայնքի բնակիչների շահերի պաշտպանության համար , կազմակերպում է համայնքի բնակչության հաշվառումը , սահմանում է

խնամակալություն և հոգաբարձություն , կատարում է քաղաքացիների ընդունելություն :

Աջակցում է զորակոչին , զորահավաքներին , քաղաքացիական պաշտպանության մարմիններին : Սահմանված կարգով տալիս է շինարարության թույլտվություն , իրականացնում է համայնքային սեփականություն համարվող շենքերի ու շինությունների հաշվառումը և բաշխումը , կազմում է սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը , դրանք ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը /*Համաձայն մեթոդական ուղեցույցի «Վարչական հսկողություն» բաժնի 2-րդ մասի , 7-րդ կետի 22-րդ , 25-րդ և 27-րդ ենթակետերի՝ «Համայնքի ղեկավարի այլ բնագավառներում իրականացրած լիազորությունների նկարմամբ իրավական և մասնագիտական հսկողություն»* /:

Համայնքի ավագանու համաձայնությամբ և սահմանված պայմաններով ու կարգով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն համարվող հողամասերը :

1. Համայնքում ոչ լիարժեք են պահպանվել ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 1477-Ն որոշման պահանջները՝ «Արուտների և խոտհարկների պայմանագրերի կնքման վերաբերյալ» :

2. Համայնքի հողային հաշվեկշռում թերի են կատարվել փոփոխությունները կապված բազմամյա տնկարկների հեկտարային տարածքների , ինչպես նաև քաղաքացիների սեփականություն հանդիսացող հողերի գործառնական նշանակությունը փոփոխելու կապակցությամբ :

/Համաձայն՝ մեթոդական ուղեցույցի «Վարչական հսկողություն» բաժնի 2-րդ մասի , 3-րդ կետի՝ «Համայնքի ղեկավարի հողօգտագործման բնագավառում իրականացրած լիազորությունների նկարմամբ իրավական և մասնագիտական հսկողություն» :

Կազմում և կառավարում է համայնքային ենթակայության հիմնարկների գործունեությունը , աջակցում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանությանը , հանրակրթական դպրոցի

գործունեությանը , առողջապահական մարմինների, սանիտարահիգիենիկ , հակահամաճարակային միջոցառումներին /*Համաձայն մեթոդական ուղեցույցի «Վարչական հսկողություն» բաժնի 2-րդ մասի , 7-րդ կետի 4-րդ , 7-րդ և 8-րդ ենթակետերի՝ «Համայնքի ղեկավարի այլ բնագավառներում իրականացրած լիազորությունների նկարմամբ իրավական և մասնագիտական հսկողություն»* /:

Գլաձորի համայնքի ղեկավարը 2012 թվականին ընդունել է 98 որոշումներ , 2013 թվականի հունվար-հունիս ամիսների ընթացքում՝ 54 որոշումներ:

Համայնքի ղեկավարի որոշումներն ընդունվել են « Իրավական ակտերի մասին » ՀՀ օրենքի 5-րդ գլխում նկարագրված օրենսդրական տեխնիկայի կանոններին համապատասխան :

2012 թվականի ընթացքում համայնքի ղեկավարը արձակել է 17 , 2013 թվականի հունվար-հունիս ամիսների ընթացքում՝ 29 կարգադրություններ :

2012 թվականի ընթացքում գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարը արձակել է 9 , 2013 թվականի հունվար-հունիս ամիսների ընթացքում՝ հրամաններ:

Համայնքի ղեկավարի կարգադրությունները և աշխատակազմի քարտուղարի հրամաններն ընդունվել են « Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի և 40-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին համապատասխան / *Համաձայն՝ մեթոդական ուղեցույցի «Վարչական հսկողություն» բաժնի 2-րդ մասի , 7-րդ կետի 2-րդ ենթակետի՝ «Համայնքի ղեկավարի այլ բնագավառներում իրականացրած լիազորությունների նկարմամբ իրավական և մասնագիտական հսկողություն» և «Կադրային գործի վարում»* բաժնի 3-րդ կետի / :

Համայնքի ղեկավարը խախտել է ՏԻՄ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջը և համայնքի ավագանու հաստատմանը չի ներկայացրել կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները / *Համաձայն մեթոդական ուղեցույցի «Վարչական հսկողություն» բաժնի 1-ին մասի 5-րդ կետի « Կամավոր լիազորությունների իրականացման կարգի և*

անհրաժեշտ ֆինանսական միջոցների որոշում համայնքի ղեկավարի ներկայացմամբ >> / :

Սահմանված դեպքերում և կարգով համայնքի բնակչությանը իրազեկում է ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին / Համաձայն ' մեթոդական ուղեցույցի <<Վարչական հսկողություն>> բաժնի 2-րդ մասի, 2-րդ կետի 2-րդ ենթակետի ' <<Համայնքի ղեկավարի քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում

իրականացրած լիազորությունների նկարմամբ իրավական և մասնագիտական հսկողություն>> : :

Համայնքի ղեկավարը անհրաժեշտ միջոցներ է կիրառում տեխնոլոգիական աղետները կանխելու , տարերային և տեխնոլոգիական աղետների հետևանքները վերացնելու ուղղությամբ / Համաձայն ' մեթոդական ուղեցույց ' <<Վարչական հսկողություն>> բաժնի 2-րդ մասի, 7-րդ կետի 21-րդ ենթակետի' <<Համայնքի ղեկավարի այլ բնագավառներում իրականացրած լիազորությունների նկարմամբ իրավական և մասնագիտական հսկողություն>> /:

Պատշաճ հսկողություն չի իրականացնում առևտրի , հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում / Համաձայն ' մեթոդական ուղեցույց ' <<Վարչական հսկողություն>> բաժնի 2-րդ մասի, 5-րդ կետի ' <<Համայնքի ղեկավարի այլ բնագավառներում իրականացրած լիազորությունների նկարմամբ իրավական և մասնագիտական հսկողություն>> /:

Համայնքի տարածքում պատշաճ մակարդակով կազմակերպվում են գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների դեմ պայքարի աշխատանքները : Անհրաժեշտ վերահսկողություն է իրականացվում բնության պահպանությանը / Համաձայն ' մեթոդական ուղեցույցի <<Վարչական հսկողություն>> բաժնի 2-րդ մասի , 7-րդ կետի 20-րդ ենթակետի' <<Համայնքի ղեկավարի այլ բնագավառներում իրականացրած լիազորությունների նկարմամբ իրավական և մասնագիտական հսկողություն>> /:

Գլածորի համայնքի ղեկավարի աշխատակազմի կադրային գործի վարման նկատմամբ վերահսկման իրականացման արդյունքները հետևյալն են

*/ Համաձայն՝ մեթոդական ուղեցույցի <<Կադրային գործի վարում>> բաժնի
1-ից 16-րդ կետերի /*

1. Համայնքի ղեկավարի աշխատակազմի կանոնադրությունը լրամշակված տարբերակով հաստատվել է համայնքի ավագանու 14.03.2013 թվականի թիվ 13-րդ որոշմամբ :

2. Համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի իրավական ակտերի հաշվառման մատյանները վարվում են Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի <<Հասարակայնությանն իրավական ակտերի մասին իրազեկման և իրավական ակտերի հաշվառման կարգերը հաստատելու մասին>> թիվ 1146-Ն որոշման 2-րդ կետին համապատասխան : Ավագանու որոշումները ընդունվել են <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 5-րդ գլխում նկարագրված օրենսդրական տեխնիկայի կանոններին համապատասխան :

3. Աշխատակազմը ստորաբաժանումներ չունի.
Համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել են սահմանված կարգով, այդ թվում՝ համայնքային ծառայության պաշտոնների մասով հաստիքացուցակը համապատասխանում է համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկին, ինչպես նաև պաշտոնային դրույքաչափերը համապատասխանում են «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի ու «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի պահանջներին :

4. Գլխավորի համայնքի ղեկավարի 12.04.2013 թվականի թիվ 34 որոշմամբ հաստատվել են համայնքային ծառայության նոր պաշտոնների անձնագրերը՝ «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 25-ը փետրվարի 2013 թվականի ՀՕ-4-Ն ՀՀ օրենքի պահանջներին համաձայն .

5. Համայնքային ծառայողների անձնական գործերի վարման նկատմամբ ուսումնասիրությունը իրականացվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 20-Ն հրամանով հաստատված <<Համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգի>> համաձայն : Ուսումնասիրության ընթացքում թերություններ չեն հայտնաբերվել .

ա) համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի արդյունքում հաղթող ճանաչվելու մասին համապատասխան մրցութային հանձնաժողովի կողմից տրված եզրակացությունը առկա է ,

բ) անձնական թերթիկը (Ձև N 2)՝ լրացված է առանց թերությունների,

գ) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից տրամադրվող դատվածության բացակայության մասին տեղեկանքը առկա է,

դ) աշխատանքային գրքույկները լրացված են առանց թերությունների,

ե) համայնքային ծառայողի կողմից իր կատարած աշխատանքների մասին անմիջական ղեկավարին ներկայացրած կիսամյակային հաշվետվությունները բխում են հաշվետվողականության տրամաբանությունից

զ) անմիջական ղեկավարի կողմից տրված ծառայողական բնութագիրը առկա է ,

է) համայնքային ծառայողի կողմից իր անձնական գործի բոլոր նյութերին, իր գործունեության գնահատականներին և այլ փաստաթղթերին ծանոթանալու մասին վկայող փաստաթղթերը առկա են.

6. Ուսումնասիրության արդյունքում պարզվել է , որ Գլածորի համայնքի ղեկավարի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների անհատական կազմերը հաստատելու մասին կայացվել է որոշում, որը բխում է համայնքի ավագանու նիստում հաստատված մրցութային ու ատեստավորման հանձնաժողովներում ընդգրկվող համայնքի ավագանու քանակական և անհատական կազմը հաստատելու մասին որոշումից:

7. Գլածորի համայնքի ղեկավարը համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների անհատական կազմը հաստատելուց հետո 20-օրյա ժամկետում՝ հրավիրել է հանձնաժողովի աշխատակարգային նիստ ու ընտրել հանձնաժողովի նախագահի տեղակալ .

8. ՀՀ տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերի հիման վրա համայնքի ղեկավար 7-րդ կետում նշված որոշման հավելվածների տեսքով հաստատել է նաև համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը.

9. ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված համայնքների ղեկավարների աշխատակազմերի աշխատանքային կարգապահական ներքին օրինակելի կանոնակարգի հիման վրա հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը և պատշաճ իրազեկվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի բոլոր աշխատակիցներին.

10. Գլաձորի համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարը պատշաճ կերպով է վարում մրցույթներին մասնակցելու համար դիմած քաղաքացիների տվյալների գրառման համարակալված մատյանը, վերապատրաստման հաշվառման մատյանը , ինչպես նաև անձնական գործերի հաշվառման մատյանը.

11. Գլաձորի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմում համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնողների (մրցույթի արդյունքներով նշանակված կամ ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնող) կրթության, համապատասխան ստաժի և այլ տվյալները համապատասխանում են համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրության և տվյալ պաշտոնի անձնագրի պահանջների հետ.

12. Գլաձորի գյուղական համայնքից ՀՀ Վայոց ձորի մարզպետարան ներկայացված գրանցամատյանային տվյալների (Ձև NN 1, 2) ուսումնասիրությունը փաստում է դրանց արժանահավատությունը .

13. Գլաձորի գյուղական համայնքում համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացված մրցույթների և համայնքային ծառայողների ատեստավորումների փաթեթների ուսումնասիրության արդյունքում խախտումներ չեն արձանագրվել .


14. ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի հանձնարարականների կատարման մասով՝ կապված համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերում համապատասխան փոփոխություններ կատարելու հետ (զինապարտության, խնամակալության և հոգաբարձության մասով, ինչպես նաև «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններից և լրացումներից բխող, պաշտոնների անձնագրերում համապատասխան փոփոխությունների կատարման անհրաժեշտության մասով), խախտումներ չեն արձանագրվել :


15. Գլաձորի գյուղական համայնքում վարվում է Զինապարտ քաղաքացիների հաշվառման գրանցամատյան . գրանցամատյանի վարման ուղղությամբ ցուցաբերվել է մեթոդական և խորհրդատվական օգնություն :


16. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության կողմից հայտնաբերած թերությունների մասին զեկուցագրի՝ համայնքի ղեկավարի ներկայացրած տեղեկատվության և փաստացի իրավիճակի հետ համադրման արդյունքում անհամապատասխանություններ և թերություններ չեն հայտնաբերվել :


Գլաձորի գյուղական համայնքում կատարված վարչական հսկողության վերաբերյալ կազմված ակտը քննարկվել է մարզպետարանում : Քննարկման

արդյունքները տրամադրվել է համայնքի ղեկավարին և առաջարկվել է ձեռնարկել համապատասխան միջոցներ արձանագրված խախտումներն ու բացթողումները վերացնելու համար . ձեռնարկված միջոցների վերաբերյալ ՀՀ Վայոց ձորի մարզպետին ներկայացնել տեղեկատվություն :


Հանձնաժողովի անդամներ՝ /  Ն.Սիմոնյան

 Վ.Լևիհաննիսյան

 Ս.Աղաջանյան

 Ս.Խախատրյան

 Ն.Մաղաքյան

 Ա.Մարտիրոսյան

 Ս.Օրդոյան

10.06.2013թ.